

ԲԱՆԲԵՐ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ

ԵՐԵՎԱՆ

№ 11

1973

ՍԵՆ ԱՐԵՎԱՏՅԱՆ

«ՅԱՂԱԳՍ ԽՐԱՏՈՒ ՄԱՆԿԱՆՑ» ԳՐՎԱԾՔԸ
ԵՎ ՆՐԱ ՀԵՂԻՆԱԿԻ ՀԱՐՑԸ

Հայ փիլիսոփայական մտքի պատմության մեջ XI դարը հիբավի համար-
վում է զարգացման մի նոր շրջանի սկիզբ: Հենց այս ժամանակ է, որ շուրջ
երեքարյուրամյա տեղատվությունից հետո սկսվում է տեսական մտքի հա-
րածուն մակրնթացությունը: Իր դարի ալեկոծ ոգին արտահայտելով, այն
ձգտում է գործուն դեր խաղալ հասարակական կյանքում և, դասական շրջանի
ժառանգությունն օգտագործելով, պատասխան տալ ժամանակի հուզող հար-
ցերին: Սուր են դասակարգային բախումները և հակասական է դարի ոգին:
Մավալուն վանական շինարարությունը և կրոնական, ճգնավորական տրամա-
դրությունների խորացումը զուգորդվում են աշխարհիկ ոգու աշխուժաց-
ման, ինչպես և իշխող իրավակարգի ու պաշտոնական զաղափարախոսության
հանդեպ ժխտական դիրք բռնած աղանդավորության հետ:

Շատ շեն այդ դարում ստեղծված երկերը և սակավաթիվ են հեղինակնե-
րը, որոնք առաջ են տանում իմաստասիրական միտքը, բայց նշանակալից են
նրանց աշխատությունները, որպես զարգացած ավատատիրական հասարա-
կության կենսական խնդիրները բարձրացնող երկեր: Այս շրջանի փիլիսոփա-
յական միտքը, պետք է ասել, ըստ բովանդակության բավարար շափով ու-
սումնասիրված չէ: Այն հայտնի է միայն ամենաընդհանուր գծերով: Մի շարք
երկեր էլ շեն ենթարկվել բանասիրական քննադատության, որը հնարավորու-
թյուն պիտի տա վերջնական խոսք ասելու նրանց պատմական արժեքի, հեղի-
նակային պատկանելիության և այլ հարցերի վերաբերյալ:

Նման երկերի թվին է պատկանում այդ ժամանակաշրջանում ստեղծված
«Յաղագս խրատու մանկանց» ուշագրավ իմաստասիրական գրվածքը, որը
հասել է մեզ միայն մեկ ընդօրինակությամբ¹: Այն գիտական շրջանառության
մեջ դրեց պրոֆ. Ա. Արքահամյանը, 1956 թ. Հրապարակելով բնագիրը XI—XII
դարերի անվանի գիտնական Հովհաննես Սարկավագի երկերի հատորում²:
Տվյալ հրատարակությունից հետո էլ Հովհաննես Սարկավագի հայացքների
կնաշատմանը անդրադարձած փիլիսոփայության պատմաբանները առանց
դույզն ինչ կասկածի օգտագործեցին այն Սարկավագի աշխարհայացքի լու-
սարանման համար³:

¹ Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռագիր № 5619, էջ 119ա—133ա:

² Ա. Գ. Արքահամյան, Հովհաննես իմաստասերի մատենագրությունը, Երևան, 1956, էջ 306—315:

³Տե՛ս Գ. Հ. Գրիգորյան, Հովհաննես իմաստասերի փիլիսոփայական հայացքները, «Պատ-
մաբանասիրական Հանդես», Երևան, 1958, № 3, էջ 188—200; Հ. Գ. Գարեիլյան, Հայ փիլի-
սոփայական մտքի պատմություն, Հ. 2, Երևան, 1958, էջ 90:

Սակայն, իրո՞ք դա Հովհաննես Իմաստասեր Սարկավագի գրշին պատկանող երկ է: Այդ կասկածն առաջ է գալիս, եթե ընթերցողը խորանում է տվյալ բնագրի մեջ, չնայած որ նրա վերնագիրն առաջին հայացքից կասկածի տեղիք չի տալիս: «Յովհաննու քահանայի»ի յաղագս խրատու մանկանց սուղինչ ընախօսութեամբ», այս է երկի լրիվ վերնագիրը⁴:

Հովհաննես Սարկավագի փիլիսոփիայական հայացքներն ուսումնասիրելիս մեզ անհրաժեշտ եղավ գտնել նրա հայտնի միտքը փորձի նշանակության մասին: Սարկավագի բնագրերի հրատարակիչն իր գրքի ոռւսերեն և անգլերեն ամփոփումների մեջ հայտարարում է, որ բոլոր հետազոտողները հենց կել են Դ. Ալիշանի կողմից արված մեջրերման վրա, որը ցավոք սրտի մատնանշել աղբյուրը, իսկ ինքը «իր ուսումնասիրության մեջ ցույց է տալիս աղբյուրը: Վերջին աշխատությունը, որը զետեղված է՝ մենագրության մեջ,— շարունակում է հրատարակիչը,— Հովհաննես Իմաստասերի մանկավարժական-փիլիսոփիայական երկն է, գրված աշակերտների համար»⁵, այսինքն «Յաղագս խրատու մանկանց» բնագիրն է:

Տեքստի մանրազնին հետազոտությունը ցույց է տալիս, որ այս պնդումն անհիմն է: Այնտեղ շկա և ոչ մի արտահայտություն փորձի, ոչ որպես գիտության ճշմարտացիության շափանիշի, ոչ էլ ճանաշման պրոցեսում նրա խաղացած դերի մասին: Սակայն բնագրի ուսումնասիրումը հանգեցնում է ընթերցողին մի բոլորովին անսպասելի արդյունքի: Այն կասկած է առաջ բերում առհասարակ նրա՝ Սարկավագի գրչին պատկանելու վերաբերյալ:

«Յաղագս խրատու մանկանց» երկի ոճը, լեզուն, օգտագործված բառամթերքը զգաստացնում են ընթերցողին: Այն գրված է հունաբանություններով առատ, խրթին մի լեզվով, որը հատուկ չէ Սարկավագին: Բացի այդ, բնագրի մի շարք տեղերում զգացվում է անսքող կիրք, հաղիվ զսլված զայրութի պոռթկումներ, որոնք տարօրինակ են «մանկավարժական-փիլիսոփիայական» դրվածքի համար:

Ո՞րն է «Յաղագս խրատու մանկանց» երկի ստեղծման հիմնական նպատակը:

Բնագրի հետազոտումը նախ և առաջ ցույց է տալիս, որ հեղինակը հույժ անհանգստացած է ինչ-որ հակառակորդների գործունեությամբ և ձգում է հավատացյալներին՝ եկեղեցու «մանուկներին», և ոչ թե աշակերտ-երեխաներին հեռու պահել այն մարդկանցից, որոնք «աղավաղում են» բարքերը, պղտորում են միամիտ հավատացյալների միտքը: Այդ «շարիքը», ըստ հեղինակի, առաջ է բերում «այրումն մտաց անհնարին բոցով և տանջանաք ոչ թէ թեթեազոյնք ինչ քան զգեհենին հրոյ. անտի և ձիք իդամոլք մարդիկ խրաբանշիւր ոք ի կին ընկերի իւրոյ վրնջելով ամաշեմ զանամաթութիւն այնպիսի աշաց և զլարշութիւն յանդզնութիւն հաւասարապէս ի մէջ բանիւ ածել և յանդիման կացուցանել»⁶: Այդ մարդիկ ահավոր վտանգ են ներկայացնում եկեղեցու համար որպես «ամենայն բարեաց իսկականաց ամայութիւն և բովանդակ դեղիսութեան և անաւրէն վարուց սկիզբն և կատարած»⁷:

4 Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. № 5619, էջ 119ա:

5 Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը, էջ 355 (սում. ամփոփում) և էջ 360 (անգլ. ամփոփում):

6 Նույն տեղում, էջ 310, տող 83—87:

7 Նույն տեղում, էջ 315, տող 10—11:

Արդյո՞ք մի «մանկավարժական» գործում մանուկների դաստիարակության ու կրթության հարցերով մտահոգված հեղինակը պետք է նման խայլող և հայցոյական ածականներով ու մեղադրանքներով սպառնար իր զեռատի ունկնդիրներին։ Ինչո՞ւմն է բանը։ Ո՞րն է այս գործի ստեղծման իսկական դրդապատճառը։ Գուցե ինչ-որ աղանդավորների դեմ է գրված տվյալ երկը, կամ, ավելի ճիշտ, նրանց աղղեցության տակ ընկած մարդկանց դարձի բերելու, «Ճիշտ» ուղու վրա դնելու մտահոգությո՞ւնն է հարկադրել հեղինակին զրել այս գործը, ստիպելով նրան մի կողմից սպառնալ, հանդիմանել, բացահայտել թաքնված վտանգը, իսկ մյուս կողմից ցույց տալ «փրկության» ճանապարհը, հույս ներշնչել նրանց, որ անկեղծ զղջումով և ապաշխարությամբ կարելի է քավել մեղքը, լուսավորել միտքը սուրբ գրքով և աստվածաբանական գիտությամբ։ Նա հորդորում է ունկնդրին։ «Քաջակրթապէս զերկոսին ախորժեմ մակատանալ քեզ՝ որ ինչ վարուց նախ, և ապա զտեսականին՝ ըստ կարողութեան աստուածացին և բարձրագոյն ուսմունք գիտելով»⁸։

Մի քանի տող հետո նա եղբակացնում է. «ուրեմն անրանութիւն յանդիտութենէ, զտիրապէս շարութիւնն ի ներքս ածեալ ձեացուցանէ փոխադարձակի ի ժանդատեսիլն զիմաւորութիւն զկերպարանս անձին, վասն որոյ ասասցի և յոյժ դիսլողապէս, մանաւանդ եթէ ըստ ճշմարտութեան, կուապաշտութեան վարդապետ»⁹, և այլն։ Այնուհետեւ հուսագրում է. «Այլ իմաստութիւն նախայաւարութեան սկիզբն է երկիւզ Տեառն, որպէս Դաւիթ և Սովոմոն ուսուցանեն, որով խորշի ամենայն ոք ի շարէ և գնալով ի ճանապարհս Տեառն երանեցին»¹⁰։

Պարզ է, որ հեղինակը ոչ թե նպատակ է ունեցել զրելու մի մանկավարժական դործ, այլ մի փիլիսոփայական-բարոյագիտական թուղթ, որով նա խրատում է իշխող բարոյական նորմերից և, հավանաբար, պաշտոնական դավանանքից շեղվող, «բարձրագոյն ուսմունք» աղավազող մարդկանց։

Արդ, միառժամանակ թողնելով տվյալ բնագրի բովանդակության ու ընույթի հետ կապված հարցերը, քննենք նրա լեզվա-ոճական առանձնահատկությունները, որից հետո առաջ կքաշենք մեր ենթադրությունը նրա հեղինակի մասին։

«Յաղագս խրատու մանկանց» Սարկավագին վերադրված երկն ուսումնասիրելիս, ինչպես նշեցինք, ընթերցողին դարմացնում է հունարանությունների առատությունը։ Բերենք բազմաթիվ օրինակներից մի քանիսը։ Հեղինակն օգտագործում է այսպիսի բառեր և դարձվածքներ։

«Չարապնդեմ», «մակստացական», «մակստանամ», «տրամակայեմ», «տրամադրեմ», «յարաբարդութիւն», «ստորակայ», «բացատուեալ», «դիւրակուալ», «դիւրաթուելի», «դժոխաշարժագոյն», «միջակաձեւ»,

«պատահեսցէ որում և ոչ բնաւ իսկ ունի մակն»,

«ունակացելոց ի նմա հակառակացն զծաւորութեանց»,

«որակութեանց ճաշակականաց գոլով զդայութիւն ի ներքս մտելոց և որտաքերական»,

⁸ Նույն տեղում, տող 86—88։

⁹ Նույն տեղում, տող 3—7։

¹⁰ Նույն տեղում, տող 12—14։

«եռանդն շուրջ զսրտիւն արեան»,
 «ուսուցելումն զաւրութիւն անուանել իշխեցելով»,
 «Հոտոցն զգայաբանի ընդմիջեցելոց»,
 «որ մակստացականն է... ունակապէս տրամադրեսցի»,
 «ըստ որում քաջակրթապէս զերկոսին ախորժեմ մակստանալ քեզ»
 և այլն:

Բերված օրինակները խոսում են այն մասին, որ «Յաղագս խրատու մանկանց» երկն իր լեզվա-ոճական առանձնահատկություններով անհարիր է Հովհաննես Սարկավագի գրելաձեմին: Սարկավագը զրում է պարզ, դյուրամատչելի լեզվով, խուսափում է խրթնաբանություններից և հունաբան դարձվածքներից: Բավական է համեմատել նրա «Մեկնութիւն տումարիս հայկագնեալ», «Բանք վասն հինգհարիւթից», «Յաղագս անկիւնաւոր թուոց», «Բան իմաստութեան առ ձագն, որ կոչի սարեկ», «Յաղագս եղանակաց և տօնից», «Յաղագս քահանայութեան և քահանայից» և այլ աշխատությունները մեզ հետաքրքրող բնագրի հետ, որպեսզի համոզվենք, որ այդ համագրումը շի խոսում Սարկավագի հեղինակության օգտին:

Դ. Ալիշանը և Հ. Ռոկյանը, որոնք առանձին զբաղվել են Հովհաննես Սարկավագի կյանքի և զբավոր ժառանգության հարցերով, նրա լեզվա-ոճական առանձնահատկությունները քննելիս նույնպես նշում են, որ Սարկավագը զրում է սահուն, գեղեցիկ ոճով, երբեմն օգտագործում է հոետորական սեթենթ դարձվածքներ, սակայն իր միտքը շարադրում է միշտ պարզ, առանց հունաբանությունների և մութ ու խրթին նախագասությունների: Նա ունի «բարակամիտ ըմբռումն և վարպետ բացատրություն, լեզու արվեստավոր, բայց հստակ և հայկաբան»¹¹, —տառմ է Դ. Ալիշանը: Նույն կարծիքն է պաշտպանում և Հ. Ռոկյանը, որը հատկապես նշում է, թե Սարկավագի ոճի համար շատ բնութագրական է նրա «Յաղագս քահանայութեան» հայտնի քարոզը¹², որն իր լեզվով շափազանց հեռու է «Յաղագս խրատու մանկանց բնագրից»:

Լեզվա-ոճական այս ակնբախ տարրերությունը մտածել է տախիս, որ դուցե հրատարակիչը իզուր է հավատ ընծայել վերնագրում «Յովհաննու քահանայի» անվան հիշատակությանը, որովհետեւ մեկ ընդօրինակությամբ մեզ հասած բնագիրը կարող է ունենալ որոշ թերություններ ինչպես բուն տեքստում, այնպես և խորագրում:

Ո՞վ է այդ «Յովհաննէսը»: Գուցե այդ անվան տակ պետք է որոնել մի ա՞յլ հեղինակի, որը, ի միջի այլոց, բացի վերը նշված հունաբանություններից, սիրում է օգտագործել նաև նամակային ժանրին հատուկ արտահայտություններ, ինչպես, օրինակ. «ոչ այժմ կամիմ, այլ քեզ թողուլ իմանալ և խորհել», «Հրաժարելով լերկարութենէ բանին», «թուի ինձ», «որպէս վարկանիմ», «աւելորդ ինչ ոչ վարկանիմ», «նշանակեցաւ վերագոյն սուլ մի», և այլն:

«Յաղագս խրատու մանկանց» երկում օգտագործված նման արտահայտությունները, նրա հունաբան լեզուն և մանավանդ բովանդակությունը ամե-

¹¹ Դ. Ալիշան, Հուշիկը հայրենյաց Հայոց, հ. Բ, Վենետիկ, 1870, էջ 279:

¹² Հ. Ռոկյան, Մատենագրական բնություններ, Ա-Հովհաննես Սարկավագ, Վիեննա, 1926, էջ 30, 61, 62—63: Քարոզի բնագիրը տե՛ս «Սովետը հայկականը», հ. Գ, Վենետիկ, 1853:

նից շատ հիշեցնում են XI դարի խոշորագույն պիտնական, մտածող և քաղաքական գործիչ՝ Գրիգոր Մագիստրոսի նամակները, նրա թղթերի բարդ ոճն ու բովանդակությունը, անտիկ և քրիստոնեական հեղինակներին առատորեն մեջքերելու հակումը, ինչպես և տողերի արանքում թաքնված ու հաճախ բացահայտորեն դրսեորդող կրքոտությունը:

Այս տվյալները հուշում են, որ «Յովհաննու քահանայի» անվան տակ կարող է թաքնված լինել Գրիգոր Մագիստրոսի բազմաթիվ թղթակիցներից մեկը, որին նա ուղղել է իր նամակ-երկը, ըստ սովորության վերնագրելով այն:

Նախ, սկսենք վերնագրից: «Յաղագս խրատու մանկանց սուլ ինչ բնախօսութեամբ» խորագրի երկրորդ կեսը՝ «սուլ ինչ բնախօսութեամբ» ձեզ Մագիստրոսի նամակներում հաճախ հանգիպող արտահայտություններից է, ինչպես, օրինակ, «սուլ ինչ իմաստասիրել»¹³, «սուլ ինչ ըստ մերում սովորական մակացութեան»¹⁴, «սուլ ինչ մասնաւոր»¹⁵, «ելանել սուլ ինչ ի մերում տրամարանութեան»¹⁶, «սուլ ինչ իմաստասիրել սղատոնական... մանկանցդ վարժման առ այնոսիկ, որ հակամիտաբար հեղնիչը լինին»¹⁷ և այլն: Այս արտահայտությունները բնորոշ են Մագիստրոսին, որպես իր թղթակիցներին զիմելու, նրանց որևէ բան հաղորդելու ձև: Ըստ որում Մագիստրոսն արդարացնում է իր այդ հաճախ օգտագործվող արտահայտությունը, գրելով յորթին, սակայն սեղմ, հատու նախադասություններով: Իր նամակներից մեկում նա ինքը շեշտում է այդ հանգամանքը, ասելով՝ «սիրելի է ինձ միշտ կարճառու հատանել»¹⁸:

«Յաղագս խրատու մանկանց» բնագրի հեղինակը նույնպես պիտակցար խուսափում է երկարաբանություններից և, ինչպես ինքն է նշում՝ «Հրաժարելով յերկարութենէ բանին»¹⁹, ձգտում է «կարճառու հատանել» իր հիմնական ասելիքը:

Գրիգոր Մագիստրոսի նամակներից հայտնի է, որ նա շատ է սիրում տարբեր տոիթներով բառացի կամ սեփական խոսքերով շարագրել Պլատոնի, Արիստոտելի և Դավիթ Անհաղթի մտքերը: Նույնը մենք տեսնում ենք նաև «Յաղագս խրատու մանկանց» բնագրում: Մագիստրոսը, մարդկային հոգու համակությունները նշելիս, իր երկու նամակներում խոսում է հոգու «յորնամանակագոյն և յարաւելղագոյն» վիճակների ու հատկությունների մասին²⁰: Արիստոտելի «Մասրողություններից» վերցված այս միտքը շարագրում է նաև «Յաղագս խրատու մանկանց» երկի հեղինակը. «ունակութիւն տեղագոյն և յորնամանակագոյն զոլ սահմանեցաւ»—զրում է նա:— Եւ այդպիսիք են մակացութիւնք և տռաքինութիւնք, զի մակացութիւն թուի, ասէ, յարաւելղացն զոլ և դժոխաշարժիչն»²¹:

¹³ Գրիգոր Մագիստրոսի թղթերը, ի լոյս ընծայեց Ա. Կոստանեանց, Ալեքսանդրոսով, 1910, էջ 45:

¹⁴ Նույն տեղում, էջ 147:

¹⁵ Նույն տեղում, էջ 73:

¹⁶ Նույն տեղում, էջ 71:

¹⁷ Նույն տեղում, էջ 20:

¹⁸ Նույն տեղում, էջ 3:

¹⁹ Հովհաննես Խմաստասերի մատենագրությունը, էջ 313, տող 11—12:

²⁰ Գրիգոր Մագիստրոսի թղթերը, էջ 68, 76:

²¹ Հովհաննես Խմաստասերի մատենագրությունը, էջ 314, տող 48—51:

Մագիստրոսի սիրելի և բազմիցու օգտագործվող արտահայտություններից մեկը՝ «հունդն շուրջ զսրտիւ արեանն»²², որը նա վերցրել է Դավիթ Անհաղթի «Սահմանաց գրքից», տեսնում հնը նաև «Յաղագս խրատու մանկանց» բնագրում²³: Հեղինակն այնուշետև շարադրում է համարյա բառացի Շավիթ Անհաղթի միտքը բարեպաշտ և ողջախոռ լինելու, ցանկությունները հաղթահարելու մասին²⁴, իսկ հետո, նույնպես հետեւելով Դավիթին, շեշտում, որ արդար մարդը, եթե ընտրության հարց լինի, պիտի գերադասի զրկանք իրելը ուրիշին զրկանքներ պատճառելուց²⁵:

Ինչ վերաբերում է Պլատոնին, ապա պիտք է տսել, որ Մագիստրոսը, որպես նորագլատոնական փիլիսոփայության ուժեղ ազգեցության տակ զանգող իմաստաներ, չի թաքցնում իր՝ պաշտամունքի հասնող հարգանքը նրա նկատմամբ: «Հրաշալին Պղատոն», «սրանշելին Պղատոն», այսպիսի ածականներով է օժտում նա իր սիրելի իմաստաներին, որի գործերը նա ոչ միայն բաց գիտե, այլև ցանկացել է մի բանիսը թարգմանել հայերեն: Պլատոնի անվան բազմաթիվ հիշատակություններից բացի, իր նամակներում Մագիստրոսը հանգամանորեն շարադրում է նրա հայացքները և բազմաթիվ տաիթներով կրկնում նրա մտքերը:

«Յաղագս խրատու մանկանց» երկի հեղինակը նույնպես բրիստոնեական գոնավորում ունեցող նորագլատոնականության հետեւրդ է և, բացի հայ նորագլատոնական Դավիթի հայացքներից, առիթը բաց չի թողնում Պլատոնին հիշատակելու ու նրա զաղափարները շարադրում համար»:

Գրիգոր Մագիստրոսն իր փայլուն հելլենական կրթությունը զուգորդում էր խորը աստվածաբանական գիտելիքների հետ: Նա նույնքան աստվածաբան էր, ինչքան և փիլիսոփա-գիտնական: Այդ հանդամանքը շատ ճիշտ նշել է Մ. Օրմանյանը, ասելով Մագիստրոսի մասին հետեւյալը: «Կատարյալ աստվածաբան մը և կրոնքի նախանձախնդիր պաշտպան մը, ինչպես իրմեն մնացած գրությանց ամեն մի տողը կհաստատե: Պիտք չէ ուրեմն զարմանալ երրոր տեսնենք զինքն կրոնական ձեռնարկումներու գլուխը նույնշափ եռանդով, որշափ հայրապետ մը կրնար ունենալ»²⁶:

«Յաղագս խրատու մանկանց» բնագրի հեղինակը լիովին արդարացնում է այդ գնահատականը, ցուցաբերելով իրեն որպես «կրոնքի նախանձախնդիր պաշտպան»: Ինչպես «հայրապետ մը», նա խրատում է եկեղեցու «մանուկներին» և ցույց տալիս այն վտանգը, որ սպառնում է «ճիշտ» ճանապարհը շեղվողներին: Ընդ որում այդ նա անում է և՛ զուտ փիլիսոփայական հիմնավորումների, և՛ աստվածաշնչի հեղինակության օգնությամբ, իսկեւսկ այն-

²² Գրիգոր Մագիստրոսի թղթերը, էջ 48, 71, 74 ևն:

²³ Հ. Իմաստ. մատեն., էջ 312, տող 82:

²⁴ Տե՛ս նույն տեղում, տող 86—90: Հմմտ. Դավիթ Անյաղը, Մահմանը իմաստասիրութեան, Հրատ. Ա. Աւելշատյանի, Երևան, 1960, էջ 62 և 88:

²⁵ Հրապարակված տեքստն աղճատված է՝ «բարիոք և զրկել բան եթէ (չ)ըզրկել» (տե՛ս Հ. Իմաստ. մատեն., էջ 312): Հրատարակիչը չի ուղղել այն և ստացվել է մի անհետել բան: Պետք է լինի՝ «բարիոք և զրկիլ բան եթէ զրկել», ինչպես որ Դավիթի մոտ է՝ «իսկ եթէ զէպ լինեցի ընտրել, ընտրէ զրկիլն առաւել բան եթէ զզրկելն» (Դավիթ Անյաղը, Մահմանը իմաստասիրութեան, էջ 96):

²⁶ Տե՛ս Հ. Իմաստ. մատեն., էջ 313:

²⁷ Մ. Օրմանյան, Ազգապատում, Բեյրութ, 1959, էջ 1246.

սկս, ինչպես այդ սովոր է անել քաջաճմուտ Հելլենոսեր գիտնական, բայց ազանդահալած իշխան և «կատարյալ աստվածաբան» Գրիգոր Մագիստրոսը:

Վերջինս, բացի հին հունական փիլիսոփաներից, առատորեն օգտագործելով սուրբ գիրքը, այստեղ ևս ունի իր նախասիրությունը: Այդ աշխարհական փիլիսոփայի, իշխան-աստվածաբանի սրտին շատ մոտ է սազմոսերդու Դավիթի՝ իր իմաստուն, կյանքի անդունքը և բարձունքը լավ զիտցող բանաստեղծ-թագավորը: «Սազմոսականք մնձին Դաւիթայ զերագոյն քան զրոլոր մարդարէիցն դասու»²⁸, «Հայեցայ ի բանս Դաւիթայ, որ սիրելին է ինձ»²⁹ և այլ նման արտահայտություններով Մագիստրոսն ինքը կարծես պատճառարանում է իր նամակներում Դավիթի սազմոսներից քաղված մեջբերումների առատությունը և նրա անվան հաճախակի հիշատակումը:

«Յաղագս խրատու մանկանց» բնագրի հեղինակը նույնական ավելի շատ տեղ է հատկացնում Դավիթին, քան մյուս մարդարեներին և երկար հորդորում եկեղեցու «մանուկներին» նրա օրինակով ամեն գիշեր լվանալ իրենց անկողինը զղջման արտասուրով³⁰: Բնագրի վերջում հեղինակը նորից հիշում է Դավիթին և հիշեցնում նրա խոսքերը հեզ լինելու, «տկարութեամբ զօրանալու մասին»³¹: Այդ երկու մտքերը, ի թիվս Դավիթից քաղված բազմաթիվ խոսքերի, մի քանի անգամ հանդիպում ենք նաև Մագիստրոսի նամակներում³²:

Հետաքրքիր է համեմատել «Յաղագս խրատու մանկանց» բնագրում և Մագիստրոսի նամակներից մեկում արտահայտված այն մտքերը, որոնք վերաբերում են ուսման նշանակությանը, ինչպես և այն բովանդակությանը, որ հեղինակները դնում են տվյալ հասկացության մեջ:

«Յաղագս խրատու մանկանց»

Գր. Մագիստրոսի բորերը

Քաջադիպ և բարեվայելուշ առամել մանկականն բուսոյ է ժամանակ:

...նախախնամական հրամանի անսալով Աստուծոյ: Խոկ մարդ վայրենամտեալ յանուսումնուրենէ առանել բան երէ ի շար տրամադրութենէ և յունակութենէ: (էջ 308 և 309):

Մորքերի և արտահայտությունների համբուկնումներն ու նմանությունը ակներե են: Երկու դեպքում էլ ուսումնության սույնությունը որպես աստվածային պատվիրանների զիտություն, որոնց հիմքերը երկյուղի հետ միասին պիտը է արմատավորեն ամենահարմար ժամանակին՝ մանուկ հասակում:

Մագիստրոսի նամակների և «Յաղագս խրատու մանկանց» բնագրի միջև բացի լեզվա-ոճական ու զաղափարական զուդադիպումներից, կան նուև այլ կետեր, կապված հեղինակին ժամանակակից մարդկանց ու իրազրության հետ:

Եթէ լինի և ոչ երկիրդին Աստուծոյ ի մանկական տիսն վարձի, կարծեմ եթէ ոչինչ օգտէ, քանզի շար ախտ անձին հանդիպի ի վատթար հրահանդից և յանուսումնութենէ և ի շար ունակութենէ: (էջ 69):

²⁸ Գր. Մագիստ. թղթ., էջ 54:

²⁹ Նույն տեղում, էջ 56:

³⁰ Հ. Իմաստ. մատեն., էջ 310—311, տող 4—19:

³¹ Նույն տեղում, էջ 315, տող 13 և 18:

³² Տե՛ս Գր. Մագիստ. թղթ., էջ 56—57, 127, 149 ևն:

Այդ առումով առաջին հերթին նշելի է Գրիգոր Մագիստրոսի մի նամակը, որն իր բովանդակությամբ, մեր կարծիքով, լույս է սփռում «Յաղաց խրատու մանկանց» երկի ստեղծման հանգամանքների վրա: Դա Մագիստրոսի թղթերի ժողովածուի ժԴ նամակն է³³, ուղղված Սյունյաց արքեպիսկոպոս Հովհաննեսին ի ոպատասխան նրա գրության: Մագիստրոսի մտերիմ բարեկամ և համախոչ Հովհաննեսը երկար տարիներ (1006—1056 թթ.) զիսավորել է Սյունյաց թեմը: Մագիստրոսի նամակներից իմանում ենք, որ նա խորր հարգանք ու սեր է տածել Հովհաննեսի նկատմամբ: «Յիմոյ լուսանուիզ», «Հայր իմ և տէր, սնուցիչ և վարդապետ», «ողջ լեր, փոխան Յիսուսի», «Հովի քաջ»: այսպիսի բառեր է շռայլում Մագիստրոսը նրա հասցեին:

Հովհաննեսին ուղղված նամակից երեսում է, որ Սյունիքում տեղի են ունեցել ինչ-որ վտանգավոր իրադարձություններ, որոնց մասին Հովհաննեսը տեղեկացրել է Մագիստրոսին հատուկ նամակով և խորհուրդ ու օգնություն խնդրել նրանից: «Ծանեայ ոչ թէ միայն զգծագրեալու,—ոպատասխանում է նրան Մագիստրոսը,—այլ և զոր ոչն կամեցար լայտնել զաղեա տարակուսանց քոց և զոր ինչ կրես ի բազմաց և կորստական առանց նիւրեալ և յումանց յուղեցեալ և յումանց բղձալով և փափազմամբ զվայրաքարշումն մերոյի մանկանց մտապիրութեամբ զառ ի շար կոյս... և զտղեղ խոկումն խարդաւանող խուզման առ ի մեղկումն և ի կենցաղականս անկենցաղ կենցաղապրութեան քարշումն»³⁴:

Այս ինչ՝ «բազմաց և կորստական արանց» մասին է խոսքը, որոնք բաշում են եկեղեցու «մանկանց» «զառ ի շար կոյս» և «ի մեղկումն»:

Հովհաննես եպիսկոպոսին գրած նամակից երեսում է, որ Սյունիքի դեպքերը ինչ-որ կատ ունեն եկեղեցու համար վտանգավոր շարժման հետ: Այդ սրատձառով է, որ Մագիստրոսը խոսում է «բազմաց և կորստական արանց» մասին, որոնք «կորստական վարժմամբ արմատաբի խլեցեն աւերեալ և տապալեալ զայսպիսի արձան հաւատոյ»³⁵, որ այդ «զառ ի շար կոյս» քարշող «երկակենցաղ զաղանները» պարզապես քրիստոնեության թշնամիներ են³⁶:

Մենք համաձայն չենք Մագիստրոսի թղթերի հրատարակիչ Կ. Կոստանդիանցի հետ, որն այս նամակը գնահատելիս ասում է, թէ «ժԴ թուղթն հանդես է բերում մի ինչ-որ ընտանեկան գժտություն»³⁷: Այս նամակից հատակ երեսում է, որ Մագիստրոսը «ընտանեկան գժտությունը» չէ, որ անհրաժեշտ է համարում միջամտել, նա հույս էլ շունի ուղղելու «կորստական արանց» և «երկակենցաղ զաղաններին»: Նրան հետաքրքրում է հոտք, եկեղեցու «մանուկները», որոնք անուսումն ու անփորձ լինելով «ոչ որիմն զառն, խափանեալը ի զգայութենէ, զշար վարդապետութեանն նոցա խրատ»³⁸:

Ինչպես տեսնում ենք, խոսքն այսուղ «շար վարդապետութեան» մասին է և ոչ թէ ինչ-որ ընտանեկան գժտության: Նման գժտությունը միջամտող անձնավորությունը չէր կարող գժտվողների մի կողմը որակել այնպիսի ա-

33 Տե՛ս Գր. Մագիստ. թղթ., էջ 46—48:

34 Նույն տեղում, էջ 46 (ընդունված իման են.—Ա. Ա.)

35 Նույն տեղում, էջ 46:

36 Նույն տեղում, էջ 47:

37 Նույն տեղում, ծանոթագրություններ, էջ 292:

38 Նույն տեղում, էջ 46—47:

ծականներով, որոնք նա, իշխող դասակարգի ներկայացուցիչն ու գաղափարախոսը, սովորաբար օգտագործում է թուղթակեցիների և թուլացնեցիների հասցեին:

Նույն նամակում Մագիստրոսը մեղադրում է՝ ոմն տեր Գրիգորի, որի անգործության ու թուլության պատճառով «շար վարդապետությունը» վտանգավոր ծավալ է ստացել: Բանք հասել է այնտեղ, որ թեմի առաջնորդ, եպիսկոպոս Հովհաննեսը ստիպված է եղել նամակով տեղեկացնել իր մտերիմ Մագիստրոսին Սյունիքում ստեղծված իրադրության մասին: Մագիստրոսը շի հապաղել պատասխանելու նրան սույն կարճ նամակով (թուղթ ԺԴ) և մի այլ, բատ երեւյթին, ընդարձակ գրությամբ: «Գրեալ եմք առ տէր Գրիգոր,— տում է Մագիստրոսը,— և առ եպիսկոպոսդ, զորոյ զիաւասար գրոյդ ի քիկանէ տանիդ ընթեցցիս. և զԳրիգորոյն կարի խստագոյն և առանց երկարուակութեան: Յուսամմ, երէ լսեն. և եթէ ոչ, դու զտեղի կալցիս յեպիսկոպոսարանիդ և մի ուրեր այլ այսր կամ սպառնալեօք կամ ումեկօք, մինչև եկեցէ պատասխանի գրոյդ»³⁹:

Մագիստրոսի այս երկրորդ, զրեթե միաժամանակ գրված նամակը, որի մտախն նա ուղղակի ակնարկում է, կարծում ենք, հենց մեզ հետաքրքրող «Յաղագս խրատու մանկանց» բնագիրն է, որը, ամենայն հավանականությամբ, պետք է ունեցած լիներ այսպիսի վերնագիր՝ «[Պատասխանի գրոյն] Յովհաննու քահանայապետ]ի յաղագս խրատու մանկանց սուղ ինչ ընախօսութեամբ»: Այստեղ բատ էության ընդարձակորեն քննարկված են այն հարցերը, որոնք նա համառոտակի շոշափել է ԺԴ նամակում («զվայրաբարշում մերոցդ մանկանց մտադիրութեամբ զառ ի շար կոյս»):

Համեմատենք նույն Հովհաննեսին՝ Մագիստրոսի կողմից գրված նամակների վերնագրերը մեր առաջարկածի հետ: Օրինակ, ԺԵ նամակի վերնագիրն է՝ «Պատասխանի թղթոյն Յովհաննիսի Սյունյաց արքեպիսկոպոսի յաղագս Վահրամայ հօրեղօր իւրոյ կատարման մարտիրոսութեամբ»⁴⁰, կամ ԺԲ նամակի վերնագիրը՝ «Առ արքեպիսկոպոսն վասն ձկանց սուղ ինչ իմաստափել»⁴¹:

Կարծում ենք, որ վերնագրի մեր առաջարկած ձեզ ժամանակի ընթացքում աղճատվել է զրիշների կողմից, առջևից ընկել է երկու բառ («պատասխանի գրոյն»), իսկ «քահանայապետի» բառը (որը եպիսկոպոսի կամ արքեպիսկոպոսի հոմանիշն է), կրծատվելով կամ սխալ հապալվելով, հետազոտում հասկացվել է որպես «քահանայի», և վերնագրի սկզբի մասից պահպանված «Յովհաննու քահի» բառերը փաստորեն միակ հիմքն են դարձել «Յաղագս խրատու մանկանց» բնագիրը Հովհաննես Մարկարագին վերագրելու համար:

«Յաղագս խրատու մանկանց» գրվածքը մի ընդարձակ նամակ է, և այն, մեր կարծիքով, որոշակի լույս է սփռում Մագիստրոսի և Սյունյաց արքեպիսկոպոս Հովհաննեսի նամակագրության, հատկապես Մագիստրոսի ԺԴ և ԺԴ նամակների վրա: ԺԴ նամակը և «Յաղագս խրատու մանկանց» խորագիրը կրող թուղթը, կարծում ենք, գրված պետք է լինեն միաժամանակ՝ ԺԴ նամա-

³⁹ Նույն տեղում, էջ 47—48 (ընդգծումներն իմն են—Ս. Ա.):

⁴⁰ Նույն տեղում, էջ 36:

⁴¹ Նույն տեղում, էջ 45:

կից առաջ: Այդ երեք նամակները կապված են իրար հետ և գրվել են ի պատասխան Սյունյաց քահանայապետ Հովհաննեսի նամակին՝ Սյունիքում տեղի ունեցած աղանդավորական, բատ երեսութին, թոնդրակյան խլրտումների առիթով:

Իր առաջին (ԺԴ) նամակում Մագիստրոսը խորհուրդ է տալիս քահանայապետին առայժմ շդիմել այլ միջոցների և շնորանալ եպիսկոպոսարանից, «մինչ եկեղեցի պատասխանի գրոյն», որպեսզի նա՝ Հովհաննեսը, ստանալով Մագիստրոսի ընդարձակ նամակ-իրատը և հրապարակելով այն, տեսնի նրա աղքեցությունը մոլորդաների վրա, հետեւ դեպքերի հետագա բնթացքին և տեղեկացնի Մագիստրոսին գրանց մասին: Մագիստրոսը հայտնում է նրան հասցեն՝ «մեք առժամանակս այսր եմք ի Տարօն աշխարհիս Մամիկոնէից»⁴²:

Եվ ահա Մագիստրոսի՝ Հովհաննես եպիսկոպոսին ուղղած հաջորդ (ԺԴ) նամակից իմանում ենք, որ Սյունիքում ստեղծված վտանգավոր իրադրությունը փոխվել է. «ասպա մինչ կայի կարկառեալ արիւնեռանդն յուղեալ, եկն եհառ քոյդ հրեշտակ և, արտաքոյ խոկման մեր ախտից, զմեկ շիջոյց համոզեալ»⁴³: Կարծում ենք, որ Հովհաննեսն իր նամակով տեղեկացնում է Մագիստրոսին նրա խրատ-ուղերձի մասին, որը որոշակի աղքեցություն է ունեցել թեմի վրա ու կասեցրել աղանդավորական շարժման ծավալումը:

Այդ տեսակետից հասկանալի է դառնում, թե ինչու «Յաղագս խրատու մանկանց» թղթում շոշափված են նաև դավանաբանության հետ առնչվող փիլսոփիայական խնդիրներ և դաշտավարական հերքումն է արված թոնդրակյան շարժման այն հոսանքի, որն ինքը Մագիստրոսը նույնացնում է մանիքեցիների հետ⁴⁴: Այդ հոսանքը, ինչպես հայտնի է, ընդունում էր նյութի՝ աստծո հետ հավասար հավերժ գոյությունը, և այդ դուալիստական փիլսոփիայական սկզբունքի վրա խարսխում իր դավանաբանությունը: Մագիստրոսը պայմանագրում է հենց այդ դրույթի դեմ, հերքելով միաժամանակ հին բնափիլիսոփաներին, որոնցից աղանդավորները որդնդրել էին դուալիստական այդ սկզբունքը: «Եւ զի՞նչ հաւասարութիւն է արարշի և արարածոյ», — վրդովված բացականչում է նա «Յաղագս խրատու մանկանց» իր նամակում (Էջ 307): Ըստ նրա, դա անհեթեթություն է, որովհետեւ նյութը, ամբողջ աշխարհը ստեղծված է աստծո բարի կամքով: «Զի թէպէտ և ասեմք ի նիւթոյ զամենայն տեսակագործիլ առ աստուծոյ, (բայց) ոչ ի յարակայէ և յանեղէ, զամենայն տեսակագործիլ առ աստուծոյ, այլ առ ի նմանէ նախագոյանալ զնիւրն ի ճահաւորութիւն ընդունել տեսակ խոստովանիմք, որ և զտեսակսն շնորհեաց» (Էջ 306): Մինչ այդ «նիւթ գոյական ոչ էր, իսկ անմարմինն ոչ ինչ է, քանզի և ոչ նիւթ յայտ է արած զոլ աստուծոյ նախքան զտեսակագործիլն» (Էջ 307):

Իդեալիստական մոնիզմի զիրքերից հերքելով թոնդրակեցիների դուալիզմը, Մագիստրոսը շեշտում է, որ պետք է ամեն մարդու մեջ «զօրութեամբ ու ակա բանականությունը ինչքան հնարավոր է շուտ արթնացնել «ուսմամբ և երկասիրութեամբք առաքինագործել և լինել կատարելամբիտ» (Էջ 307): Այդ

42 Գր. Մագիստ. թղ., ԺԴ, Էջ 48:

43 Նույն տեղում, ԺԴ:

44 ՏԵ՛Շ նույն տեղում, Էջ, 159, 164 և 168:

անհրաժեշտ է անել, որպեսզի հավատացյալների մտքերը շպղտորվեն թյուր կաղափարներով, որպեսզի նյութը չիշխի հոգու վրա, որովհետեւ հակառակ դեպքում «մարմին բռնացեալ հաղթահարէ զգայութիւնս, և զգայութիւնք ուպստամբեալ հարստահարեն զմիտս, և ախտք արտաքս ըստ սահմանն մոլեգնաբար ելանելով ի զգայութիւնէ՝ զիտեն զրովանդակ անզգամութիւն շահեալ» (էջ 309):

Նա շարադրում է մարդկային հոգու հատկությունների մասին Արիստոտելի, Պլատոնի, Զենոնի և Դավիթ Անհաղթի ուսմունքները՝ ցույց տալու համար, թե ինչպես ուսման միջոցով պետք է արթնացնել մարդու միտքը և ճիշտ ուղղություն տալ նրան: Այդ բոլորից հետո, կարծես դիմելով ինչ-որ կենդանի հակառակորդների, նա ուղղակի ամբաստանում է. «յանուսումնութեանն անդիտութենէ անհունք են մոլորութիւն և անրոյժ հիւանդ դժնդակութիւն [զոր] բերեք յաշխարհ ամենայն, քանզի զոր ինչ և արացէ ոք ի շարեաց կամ անուանագործեցէ նորոդապէս, զնա գտանիցէ արմատ և սկիզբն բոլորեցուն» (էջ 315): Այնուհետև հեղինակը, եզրափակելով իր՝ մոլորված «մանկանց» ուղղված խրատը, հարում է սպանիչ ածականների մի այնպիսի շարան, որը աղանդավորների երեսին շպրտում էին իշխողները. «կուպաշտութեան վարդապետ, զիջութեան և պղծութեան առաջնորդ, սպանութեան դաստիարակ, ազահութեան ստորակա, որովայնի ծառայեցուցիչ, ստորութեան և նենգութեան հայր, և պարզաբար ասել՝ ամենայն բարեաց իսկականաց ամայութիւն և բովանդակ զեղխութիւն, և անօրէն վարուց սկիզբն և կատարած» (էջ 315): Այսպես կարող էին խոսել պաշտոնական եկեղեցու դեմ ըմբոստացած աղանդավորների կամ նրանց աղդեցության տակ ընկած մարդկանց հետ:

Դատահական չէ, որ Մագիստրոսը եկեղեցու մոլորված «մանուկների» հարցին կրկին անզրադառնում է թոնդրակեցիների դեմ զրված իր հայտնի ուսմակում: Նա ասում է, որ «սովորեալ են զայլք այդ (իմա՝ թոնդրակեցիները—Ս. Ա.) հանդերձի ոշխարաց զողանալ մանկունս»⁴⁵: Դատափետելով աղանդավորներին, նա պահանջում է, որ նրանք ձեռք բաշին միամիտ հավատացյալներից: «Զարեացդ առաջնորդը և մոլիքը, ի բաց կացէք յանմեղաց մանկանցդ, և դոքա եկեալ խոստովանեսցին զյանցանս իւրեանց»⁴⁶:

Նույն բանն է ասում Մագիստրոսը նաև «Յաղագս խրատու մանկանց» նամակում, լրիվ շփակելով մոլորվածների առջև եկեղեցու դռները. «Յինքնանս եկեալ, զղջանան, դառնան, յոզիս ապաշտեն, ոռոգանին աղքերը արտասուաց, թէսլէտ և անդրէն ընդ կրունկ դառնալ զիտեն, ոչ հնար լինել զործեցելումն յանգործութիւն, որպէս թէ շնացելոյ կոյս լինել կամ սպանողի՝ ոչ սպանող»⁴⁷: Մակայն կրկին փրկության հույս է տալիս նրանց, ասելով որ հարկավոր է զղջալ այնպես, ինչպես այդ անում էր իր սիրելի Դավիթ մարդարեն, որը «զաղար և հանգիստ երբէք ոչ առնոյր լինել խոստովան և ապաշտարել իրեւ զմահապարտ ո՛վ»⁴⁸:

Այս համեմատությունը ևս ցույց է տալիս, որ «Յաղագս խրատու ման-

⁴⁵ Գր. Մագիստրոսի թղթերը, էջ 153:

⁴⁶ Նույն տեղում, էջ 166:

⁴⁷ Հ. Խժաստ. մատեն., էջ 310, տող 96—100:

⁴⁸ Նույն տեղում, էջ 311, տող 13—14 (բնդդժումներն իմն են—Ս. Ա.):

կանց» նամակը գրված է՝ աղանդավորների գեմ և ոչ թե «ինչ-որ բնտանեկան դժության» առիթով:

Բերված համեմատություններն ու փաստերը վկայում են, որ «Յովհաննու քահանայի յաղագս խրատու մանկանց սուղ ինչ բնախօսութեամբ» խորագրով պիտական շրջանառության մեջ գրված բնագիրը Գրիգոր Մագիստրոսի նամակներից մեկն է: «Յովհաննու քահանայի» անվան տակ պետք է որոնել Գրիգոր Մագիստրոսի բազմաթիվ թղթակիցներից մեկին, որին նա ուղղել է իր խրատ-նամակը, բայ սովորության վերնագրելով այն: Գ. Մագիստրոսը զղել է այն Սյունյաց քահանայապետ, արքեպիսկոպոս Հովհաննեսին՝ նրա թեմում տեղի ունեցած աղանդավորական խլրտումների կապակցությամբ: Նամակի լրիվ վերնագիրը պետք է լիներ «Պատասխանի գրոյն Յովհաննու բահանայապետի յաղագս խրատու մանկանց սուղ ինչ բնախօսութեամբ»:

Այսպիսով, մենք փաստորեն գործ ունենք Գ. Մագիստրոսի մինչ այժմ անհայտ մնացած նամակի հետ, որը նոր լույս է սփռում XI դարի կեսերին Սյունիքում տեղի ունեցած գեղքերի վրա և միաժամանակ լրացնում է մեր պատկերացումները ականավոր փիլիսոփա, զրող և բաղաբական գործիշ Գրիգոր Մագիստրոս Պահլավունու աշխարհայացքի մասին:

С. С. АРЕВШАТЯН

ТРУД «О НАЗИДАНИИ ОТРОКОВ» И ВОПРОС О ЕГО АВТОРЕ

(Р е з ю м е)

В сборнике сочинений видного ученого и мыслителя XI—XII вв. Иоанна Саркавага Имастасера (Ереван, 1956) впервые был опубликован труд «О назидании отроков», сохранившийся в единственной рукописи (Матенадаран, № 5619, стр. 119а—133а). Его издатель, проф. А. Абраамян, на основе упоминаемого в заглавии имени «священника Ованиеса» (Иоанна) безоговорочно приписал данный труд перу Иоанна Саркавага.

На основе анализа содержания данного произведения, его стиля и лексики автор статьи приходит к выводу, что оно принадлежит перу известного ученого и политического деятеля XI в. Григора Магистроса. Иоанн не автор, а адресат — архиепископ Сюнийский (1006—1056 гг.), который обратился за помощью к Магистросу в связи с опасным для церкви, по-видимому, еретическим движением. Труд «О назидании отроков» является одним из многочисленных писем Г. Магистроса, в которых автор в свойственной ему эпистолярной форме рассматривает различные философские и церковно-догматические вопросы. Выясняется, что данное письмо-назидание сыграло свою роль, утихомирив распри в Сюнийской епархии. Это подтверждается другими письмами Магистроса к тому же Ованиесу, опубликованными К. Костанянцем («Послания Григора Магистроса», Александрополь, 1910, письма XIII и XIV).

Остававшееся до сих пор неизвестным пространное послание Магис-

троса «О назидании отроков» проливает новый свет на события, имевшие место в Сюнике в середине XI в. и восполняет наши представления о мировоззрении самого Григора Магистроса.

S. S. AREVCHATIAN

L'OUVRAGE „SUR L'EDIFICATION DES ADOLESCENTS“ ET
SON AUTEUR

(Résumé)

L'ouvrage „Sur l'édification des adolescents“, conservé dans un unique manuscrit (Maténadaran, № 5619, p. 119a—133a), a été publié pour la première fois dans le recueil des œuvres de l'éminent savant et penseur du XI—XII siècles Yohan Sarkavag Imastasser (Erevan, 1956). Son éditeur, le prof. A. Abrahamian, a attribué sans réserve cette œuvre à la plume de Yohan Sarkavag (Jean Diacre) en se basant sur le nom du „prêtre Hovhannes“ (Yohan) cité dans le titre.

L'analyse du contenu, du style et de la lexique de cet ouvrage permet à l'auteur de l'article de conclure qu'il appartient à la plume de Grigor Maguistros (Grégoire le Magistre), savant célèbre et homme politique du XI siècle. Hovhannes (Yohan) n'est pas l'auteur, mais le destinataire—l'archevêque de Siounie (1006—1056)—qui s'était adressé à Maguistros pour solliciter son aide contre un mouvement hérétique apparemment dangereux pour l'Eglise. L'œuvre „Sur l'édification des adolescents“ est l'une des nombreuses épîtres de Grigor Maguistros, dans lesquelles l'auteur examine divers problèmes philosophiques, ecclésiastiques et dogmatiques, dans le style épistolaire qui lui est propre. Il apparaît que la lettre édifiante en question a eu le résultat désiré en apaisant les différents dans le diocèse de Siounie. Ceci est confirmé par les autres lettres de Maguistros adressées au même Hovhannes, publiées par K. Kostantantz (Les Epîtres de Grégoire le Magistre, Alexandropol, 1910, épîtres XIII et XIV).

La longue lettre „Sur l'édification des adolescents“, inconnue jusqu'à présent, éclaire d'un jour nouveau les évènements qui ont eu lieu en Siounie vers le milieu du XI siècle et complète nos notions sur les conceptions de Grigor Maguistros lui-même.